ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՋՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 14 հոկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հուլիսի 14-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաս-

փանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2011 թվականի սեպտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր» վարկային համաձայնագիրը (Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2011 թվականի հուլիսի 14-ին:

2. Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է վեց միլիոն հինգ հարյուր հազար (6.500.000) եվրո գումարի չափով վարկ, Վարկային համաձայնագրով սահմանված պայմաններով, Տավուշի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերում համայնքային ջրամատակարարման բարելավման եւ Տավուշի (Դիլիջան քաղաք) եւ Վայոց ձորի (Ջերմուկ քաղաք) մարզերում կեղտաջրերի մաքրման կայանների եւ կոյուղաջրերի կոլեկտորների վերակառուցման գործում օժանդակելու ծրագիր (Ծրագիր) իրականացնելու նպատակով:

Ծրագրի ավարտման ժամկետն է 2015 թվականի հունիսի 30-ը:

3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) 24 հավասար կամ հնարավորինս հավասար կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին եւ հոկտեմբերի 16-ին մարել վարկը՝ սկսած Վարկային համաձայնագրով սահմանված ժամկետից.

բ) յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին եւ հոկտեմբերի 16-ին վճարել հանձնառության վճար՝ տարեկան 0.5 տոկոս դրույքաչափով.

գ) վճարել 500.000 եվրո գումարի չափով կանխավճար.

դ) Վարկային համաձայնագրով սահմանված կարգով տրամադրել վարկային միջոցները «Հայջրմուղկոյուղի» ընկերությանը.

ե) եթե Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկն այլ բան չի նախատեսում, տրամադրել Վարկային համաձայնագրի, համաֆինանսավորման եւ ցանկացած այլ տեխնիկական համագործակցության ֆինանսավորման միջոցներով գնված ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների նկատմամբ կիրառվող ավելացված արժեքի հարկը եւ ֆինանսավորման համար անհրաժեշտ այլ միջոցներ.

զ) չփոխանցել, չփոփոխել, չեղյալ չհայտարարել օժանդակ վարկային համաձայնագրի որեւէ դրույթ եւ չհրաժարվել դրա որեւէ դրույթից:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2011 թվականի հոկտեմբերի 13-ին հավանություն է տվել սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագրին:

Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրության համաձայն՝ Ծրագրի արդյունքում Ծրագրում նշված մարզերի բնակավայրերում էականորեն կավելանա ջրամատակարարման տեւողությունը, կնվազեն ջրակորուստները, կապահովվի խմելու ջրի ստանդարտներին համապատասխան ջրամատակարարումը, Ջերմուկ եւ Դիլիջան քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայանների մեխանիկական մասի եւ կոյուղու կոլեկտորների վերականգնումը կնպաստի տարածաշրջանի բնապահպանական խնդիրների լուծմանը:

5. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2011 թվականի հուլիսի 14-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

14 հոկտեմբերի 2011 թվականի
ՍԴՈ- 992